Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
ապրիլի 13-ի N 522-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ (ԼՈՒԾԱՐՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ

1. Իրավաբանական անձի հարկադիր լուծարման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) ձևավորվում է Պրոբացիայի ծառայության և Ֆինանսների նախարարության երեքական ներկայացուցիչներից, որոնք ունեն բարձրագույն տնտեսագիտական կամ բարձրագույն իրավաբանական կրթություն:

2. Հանձնաժողով (լուծարող) նշանակվում է Պրոբացիայի ծառայության պետի հրամանով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3. Հանձնաժողով նշանակելու վերաբերյալ Պրոբացիայի ծառայության պետի հրամանը պետք է պարունակի՝

1) լուծարվող իրավաբանական անձի նույնականացման տվյալները.

2) լուծարվող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափը.

3) լուծարման գործընթացի ժամկետը և կարգը.

4) հանձնաժողովի կազմը, ներառյալ՝ հանձնաժողովի նախագահի վերաբերյալ նշում:

4. Հանձնաժողովի նախագահ կարող է լինել Պրոբացիայի ծառայությունից հանձնաժողովում ընդգրկված այն անդամը, որն ունի առավել երկար մասնագիտական ստաժ Պրոբացիայի ծառայությունում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ